Այս իսկ տեսակէտով մօտենալով ներկայ պատերազմին՝ իւրաքանչիւր հայ քաղաքացի պիտի ազատագրւի այն մտայնութիւնից, թէ բանակն է միայն, որ պիտի կռւի։ Այս պատերազմը ժողովրդական է, հետևապէս նրա մէջ մասնակցութիւն պիտի ունենան ամենքը, առանց նկատի առնելու թէ ռազմաճակատումն են նրանք թէ թիկունքում։

Պատերազմի ժամանակ ժողովուրդները, ներկայ դէպքում նաև հայ ժողովուրդը, սովոր են յոյս դնելու ոչ միայն իրենց ուժերի, այլ և դրսեցու, օտարի վրա։ Գիտէք, թէ հայ ժողովուրդը ինչքան օգնութեան կոչեր է ուղղել օտարին և յուսացել, թէ կարող են դրանք որև է արդիւնք տալ, թէպէտ նրա կոչերը մնացել են յաճախ անարձագանգ։ Այժմ դոնէ մենք պիտի հրաժարւենք այդ սովորութիւնից, որովհետև քննելով արտաքին կացութիւնը՝ դալիս ենք այն եզրակացութեան, որ դրսից օգնութիւն հասնել չի կարող։ Փաստը հրապարակի վրա է. երկու ամիս է արդէն, որ մենք կռիւ ենք մղում թշնամու դէմ, բայց ոչ մի տեղից օգնութեան կամ միջամտութեան ձայն չլսեցինք։

Մենք պէտք է հրաժարւենք ուրիշի դռները բախելուց, կրկնում եմ այդ, որովհետև եթէ անգամ ուրիշը ցանկանայ միջամտել, օգնել, ապա պարզ է, որ նրա օգնութիւնը ու միջամտութիւնը անշահասէր չէ, հետևաբար, աւելի ծանր կացութեան պատճառ կարող է դառնալ։

Մեզ չպէտք է յոյս ներշնչէ նաև այն հանգամանքը, որ կարող է կռիւը ժամանակաւորապէս դադարել. շատ անգամ է պատահում այդ և շատ անգամ էլ ողբալի անակնկալներով յղի։ Ահա մեր առջև են տաճիկների առաջարկած հաշտութեան պայմանները. դոքա ասում են, թէ Հայաստանը պիտի սեղմւի, փոքրանայ, բայց թէ ո՞ր տարածութիւնն է, որի վրա մենք պիտի կարողանանք կանգ առնել հանդիստ, ցոյց չեն տալիս։ Նրանք կարող են մեր բոլոր երկրամասերը վիճելի դարձնել։ Դէպի ծով ելք են խոստանում, բայց ո՞ւմ երկրամասով — Տաճկաստանի, որ կարող է ամէն բոպէ փակել իր դռները։ Նրանք պահանջում են, որ մենք Տաճկաստանի ապահովութեան համար երաշխիքներ տանք — իշնպէ՞ս. ի հարկէ, զինաթափ լինելով, այլապէս Տաճկաստանն իրեն կը յայտարարի անապահով վիճակի մէջ։

Ժողովրդի ներկայացուցիչները, որ նստած են այս բարձր հիմնարկութեան մէջ, չեն կարող հաւատալ տաճիկների հաշտութեան առաջարկին. նրանք պէտք է բարձրաձայն յայտարարեն, որ այդ շողշողուն խօսքերի տակ թաղնւած են դաժան մտքեր, և նրանց ձայնը լսելի կը լինի ժողովրդին այս պատերից դուրս։

Անգօր չեն մեր սեփական ուժերը. բարեբախտաբար, մեծ չէ նաև մեր դէմ եկող հակառակորդի զօրութիւնը. փոքր ինչ զգաստութիւն, փոքր ինչ ուժերի լարում և ահա կարող է բախտը յօգուտ մեզ տնօրինւել։

Ժողովրդական այն հոսանքը, որ ձգտում է խաղաղութեան, այժմէն իսկ պէտք է գիտակցէ, որ ամէն խաղաղութիւն ձեռք է բերւում ուժով. խաղաղութիւնը պէտք է լինի պատւաբեր և պէտք է ամուր պահէ պետութեան կենսունակութեան հիմքերը։ Նա պէտք է պատրաստ լինի խզելու ամէն բանակցութիւն, որ սկսւում է կամ սկսւելու է իր իսկ ոչնչացման գնով։ Տաճիկները ուզում են մեզ զրկել հողից՝ մեզ ուզում են զինաթափ անել և ապա հաշտութեան բանակցութիւններ սկսել. ո՞ր ժողովուրդն է, կամ ո՞ր հոսանքն է, որ սեփական ձեռքով իր գերեզմանը փորելու համաձայնութիւն կը տայ։

Ոչ ոք դէմ չէ հաշտութեան և խաղաղութեան, բայց, կրկնում եմ, ամենքի նպատակը պիտի լինի ձեռք բերել պատւաւոր հաշտութիւն և նպաստաւոր խաղաղութիւն։ Ճիշտ է, մենք կորցրել ենք մեր պետութեան կարե-